գետը և Ամրվանը։ Դաւառի գործակալը – Մովսէս քահանայն Իւզբաշեանց այս տեղացի լինելով, խոստանում է եկեղեցական դպրոց չինել. տեսնենք մեր քաջ գործակալը երբ պէտք է բանայ դպրոցը և պարծենայ հոգեւոր իշխանութեան առաջ։

Այս 1894 թուի Բագուի Մարդասիրական Ընկերութեան ընդհանուր ժողովում իմ առաջարկութեամբ որոշուեցաւ յատկացնել նաեւ բանալի դպրոցներին Հնդարի, Զարկեարանի, Նորշէնի և Վանքաշէնի։

Կան և օտարազգի գիւղեր, որք ունին արքունի դպրոց. որք են —

1. Իվանովկայ Մալականի գիւղ՝ ունի արքունի դպրոց։
2. Լահիճ պարսկարնակ գիւղ՝ ունի արք. դպրոց։
3. Բասխալ թուրքարնակ գիւղ՝ ունի արք. դպրոց։
4. Իսմայէլլու թուրքարնակ գիւղ՝ ունի արք. դպրոց։
5. Մարազա Մալականի գիւղ՝ ունի արք. դպրոց։
6. Ալթի Աղաջ գիւղ՝ ռուսաց խառն ընդ Մալականաց, ունի արք. դպրոց։
7. Միւջի—գիւղ հրէից՝ ունի արք. դպրոց։
8. Աղսու գիւղ պարսից՝ ունի արք. դպրոց։

Այս գիւղօրայքը Զամախու և Գեօքչայի դաւառներումն են, իսկ թէ որքան այսպիսի գիւղեր կան Նուխուոյ դաւառումն՝ որ մի մասն է Աղուանից աշխարհի Կովկասի ստորոտներումն, ինձ յայտնի չեն. Զամախուոյ վիճակից դուրս լինելու պատճառաւ Նուխուոյ յաջորդութիւնը։

Սակայն, եթէ Աստուած յաջողէ, մտադիր եմ մի յարմար միջոցում շրջագայել Նուխուոյ դաւառը և տեսնել և գրել այն տեղի եղած վանքերի գրութիւնը, որք են Եղիշէ Առաքելոյ վանքը՝ Գիս (Քիշ) գիւղի մօտ, ճալէթու վանքը, են։

Որովհետեւ Աղուանից աշխարհում շատ որոնելուց յետոյ՝ չկարացինք գտնել մի նշանաւոր հնութիւն գրական կամ նիւթական, և ոչ իսկ Աղուանից գրերի հետքը գտնուեց, ուստի կարեւոր համարեցի դնել այս տեղ իբրեւ հնութեան նշան և զարդ՝ Արարատեան նահանգում գտնուած բեւեռագրոց այբուբենը չորս օրինակ՝ չորս հնագէտներից գրած, որոյ օրինակը գրուած է «Ցեղագիր Գեղարքունւոյ» անուանուած գրքիս մէջ։